ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ)
(Մահվան 100-ամյա տարելիցի առթիվ)

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ Նիկոլ Դումանը ծնվել է Ղարաբաղի Խաչեն գավառի Ղշլաղ գյուղում (Ասկերանի շրջան), քահանայի ընտանիքում:

1887 թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը: Քահանա հոր աջակցությամբ աշխատել է թեմի եկեղեցական խորհրդում, 2–3 տարի ուսուցչություն է արել Հյուսիսային Կովկասի և Արցախի ծխական դպրոցներում: 1891 թ. աշխատանքի է անցնում Թավրիզի Լիլավայի թաղի հայկական դպրոցում:

Հայ ազատագրական շարժումը և վերջինիս գաղափարախոսությունը թափանցել էր նաև Պարսկաստան՝ Սալմաստ, Խոյ, Թավրիզի հայաշատ գավառները: Նիկոլի ուսուցչություն անելը Թավրիզում մտածված քայլ էր: Ազատագրական պայքարը նախապատրաստելու գործում նա կարևորում էր ուսուցչի դերը նաև ժողովրդին մոտ լինելու, ճանաչելու, հետը շփվելու առումով: Ուսուցիչը դեպի «Երկիր»՝ Արևմտյան Հայաստան էր տանում ոչ միայն զենք՝ ֆիդայուն, այլև գիր ու գրականություն: Այդպիսին էր Նիկոլը: Նա բացի գիր ու գրականություն սովորեցնելուց, ժողովրդի մեջ արթնացնում էր ազատասիրական ոգին:

1892 թ. ամռանը Թիֆլիսում տեղի է ունենում Դաշնակցության 1-ին ընդհանուր ժողովը, որին մասնակցում է Նիկոլը, ինչն էլ նշանակում է, որ նա արդեն հեղինակություն և բարոյական իրավունք էր ձեռք բերել: Այստեղ ընդունվում է Դաշնակցության 1-ին ծրագիրը, որը այդ համաժողովից պահպանված միակ փաստաթուղթն է: Ընդհանուր ժողովն ընդունում է կուսակցության ապակենտրոն գործունեության սկզբունքը՝ նկատի ունենալով կուսակցության տարածական ընդգրկումը: Նիկոլը ևս այդ սկզբունքի պաշտպան էր:

Թավրիզում երկու տարի աշխատելուց հետո Դումանը տեղափոխվում է Սալմաստի Ղալասար գյուղ, շարունակում ուսուցչություն անել: Բայց հիմնական նպատակը «Երկրին» մոտենալն էր, սահմանամերձ գյուղերում կուսակցական, մարտական կառույցներ ստեղծելը: Շուտով նրան հաջողվում է կապ հաստատել Դերիկա վանքում և մոտակա հայկական գյուղերում գործող հայդուկային խմբերի հետ: Վանքի մոտակայքում կար չորս հայկական գյուղ՝ Բաբիկ, Ասլանիկ, Աշնակ, Հախվերան: Նա նաև որսորդ էր, մի հանգամանք, որ նրան հնարավորություն էր տալիս ծանոթանալու տեղանքին, միջավայրի աշխարհագրական առանձնահատկություններին:

Նախքան հայ ֆիդայիների հանդես գալը Դերիկա վանքում լիովին տիրություն էին անում թուրքերն ու քրդերը: Ատրպատականի առաջնորդ Ստ. արքեպիսկոպոս Մխիթարյանը հանձնարարում է վանքի կառավարիչ Մովսես Իշխանյանին վերականգնել վանքը, ով իր նշանակման առաջին իսկ օրից սկսում է աշխատանքը: Թեև պարսիկները բարեկամաբար էին տրամադրված մինչ այդ վանքում ապաստանած արևմտահայերի նկատմամբ, բայց թուրքերի դրդմամբ վերականգնած վանքը քանդում են: Վանքում հանգրվանում են մի շարք ֆիդայիներ: Նիկոլը նրանց հետ կապ է հաստատում և հենց այստեղից՝ Դերիկից, սկսվում է նրա մարտական ուղին: Հավելենք, որ Դերիկի շուրջը ընթացող դեպքերը՝ ընդհարումները քրդերի ու թուրքերի հետ, հիմք են հանդիսացել քրդերի ժողովրդական երգերի հորինման համար:

Տեղում ստեղծվում է «Վրեժ» անունով մարտախումբ, որը պիտի անցներ Վան: Դաշնակցությունը Նիկոլի մասնակցությունը խմբին մերժում է, թեև վերջինս համառաբար պնդում էր: Սակայն ոչ իրենից բխող պատճառով՝ ընկերական վեճը հարթելու խնդրով Նիկոլին չի հաջողվում այս անգամ գնալ Վան: 1895 թ. հունիսին Սալմաստից նա գնում է Թիֆլիս՝ ՀՀԴ շրջանային ժողովին մասնակցելու համար: Նրան հաջողվում է ոչ միայն արդարանալ (նրա դեմ բողոքներ էին գրվել), այլև ժողովի ընթացքում նա ծանոթանում է Ք. Միքայելյանի և Ս. Զավարյանի հետ, մտերմանում նրանց հետ, ինչը շարունակվում է մինչև նրանց կյանքի վերջը: Նիկոլը վերադառնում է Սալմաստ, բայց 1890 թ. սկսած նա պարբերաբար գնում էր Դերիկ, որը ոչ միայն ֆիդայիների հավաքատեղի էր, այլև ուխտատեղի՝ Սբ. Աստվածածնի տոնի օրը:

Վասպուրականի հայությանը զինելու և ինքնապաշտպանությունը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով Վանում գործող հեղափոխական կազմակերպությունները ձեռնարկում են հանգանակություն՝ դրամահավաք[1]:

---

[1] *Հ. Գևորգյան. Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006:*

Հանգանակած գումարով զենք գնելու նպատակով Վանից Պարսկաստան են մեկնում բազում հեղափոխական գործիչներ, որոնց թվում նաև ժողովրդի մեջ մեծ հեղինակություն ունեցող փորձառու ֆիդայիներ: Նույն նպատակով Վանից հեռանում է նաև Դումանը, որը «... հիսուն ու չորս հոգուց բաղկացած զինակիր խմբով Վանից գալիս է Սալմաստ, զենքեր տեղափոխելու համար: Նրանք ապահով կերպով, առանց դեպքերի հանդիպելու, գալիս, հասնում են Տաճկա-Պարսկական սահմանը, այստեղից անցնում մինչև մեր սիրած-պաշտած Դերիկը...»[2]:

Հասնելով Դերիկ՝ Դումանի զինախումբը հայտնվում է պաշարման մեջ: Քրդերը մեծ բազմությամբ՝ հեծյալ ու հետիոտն, լցվում են վանքի մերձակայքը և դիրքավորվելով Դումանի խմբի հակառակ կողմում, սկսում են եռանդով կրակ տեղալ հայ մարտիկների վրա:

Այս անգամ Դումանի խմբում կար ընդամենը 12 հրացան և 25 ատրճանակ, իսկ մնացածները անզեն հայեր էին, որոնք եկել էին զենք տեղափոխելու համար[3]: Դումանն անզեն մարդկանց հրահանգում է, որ պատսպարվեն վանքի պատերի հետևում, իսկ զենք ունեցողներին տալիս է որոշակի հանձնարարություններ. Շերոն, խմբապետ Միքոն, Հակոբը և Մանուկը ամրանում են վանքի հյուսիսարևմտյան կողմում գտնվող բլրի վրա: Ինքը երեք հայդուկներով դիրքավորվում է վանքի հարևանությամբ գտնվող ավերակներում, իսկ մնացած ֆիդայիները բարձրանում են վանքի տանիքը[4]:

Թշնամին դիմում է խորամանկ քայլի. փուշ, խոտ ու փայտ է լցնում վանքի չորս կողմը և վառում: Ծուխը պատում է չորս կողմը, շնչելը գնալով դժվարանում է: Վանքի ներսում Դումանի խումբը անելանելի կացության մեջ է ընկնում: Նման օրհասական պահին Դումանն իրեն չի կորցնում. հրամայում է բոլորին հավաքվել դռան մոտ և պատրաստվում է անսպասելի, վճռական գրոհով պատռել պաշարող շղթան: Այդ ընթացքում Դումանի գլխում ծնվում է մի փայլուն մտահղացում. «Նիկոլը հաշվում է՝ այնքան պետք է լուռ սպասել թաքստի մեջ, որ թշնամու ուժերը սպասողական դրության մեջ լարվեն ու լարվեն, մինչև անգիտանան ու բթանան»[5]: Մտահղացումն այս անգամ դարձյալ հաջողվում է. թշնամին կարծելով, որ վանքի ներսում հրդեհի ծուխը խեղդել է մարտիկներին՝ մի պահ դադարեցնում է հրացանաձգությունը: Օգտվելով քրդերի հանգստությունից՝ խումբը, Դումանի առաջնորդությամբ, կայծակի արագությամբ դուրս է թռչում վանքից, հրացանազարկ

---

[2] *«Հայրենիք» (Բոստոն), 1945, թիվ 1, էջ 93:*

[3] *Տե՛ս Ա ր ա մ ա յ ի ս. Զարհուրելի ոճիրը, Բաքու, 1916, էջ 151:*

[4] *Հայ Հեղափոխական Դաշնակցության կենտրոնական արխիվ (Բոստոն), թծ. 1045, գ. 15, էջ 51:*

[5] *«Դրոշակ» (Ժնև), 1914, թիվ 1:*

անում պաշարողներին, պատռում շրջափակման օղակը և մինչև քրդերը ուշքի կգային, հեռանում է ապահով վայր: Նիկոլի անհավատալի քաջագործությունից ապշահար՝ քրդերը նրան անվանում են Դուման՝ այսինքն մառախուղ, փոթորիկ կամ Ղարա Դուման (սև մառախուղ, փոթորիկ): Այստեղից էլ՝ նրա □Դուման□ մականունը:

Այնուհետև Դումանն ամենագործուն մասնակցությունն է ունենում Խանասորի արշավանքի գաղափարական առումով նախապատրաստելու և իրականացնելու գործում: Նա արշավախմբի հիսնյակներից մեկի հրամանատարն էր (1897 թ. հուլիս):

* * *

1904 թ. Դումանն անցնում է Կովկաս, հաստատվում Բաքվում:

Հայտնի է ցարական իշխանությունների դերը հայ-թուրքական զինված ընդհարումների հարցում և հատկապես նրանց վերաբերմունքը դեպի հայերը: Անդրկովկասում վաղուց շշուկներ էին պտտվում հայերի ու թուրքերի լարված հարաբերությունների մասին, և նույնիսկ չնչին առիթը կարող էր բերել իրավիճակի ժայթքման: 1905 թ. փետրվարին առիթը ներկայանում է, Բաքվում սկսվում է հայերի կոտորած: Հայերն անպաշտպան էին և անզեն, անկազմակերպ, թուրքերը հակառակը՝ բոլոր առումներով: Դաշնակցության կենտրոնական կոմիտեն մատնվել էր խուճապի: Դումանը գտնվում էր Բաքվի շրջաններից մեկում, որտեղ աշխատում էր: Տագնապալից հեռագիր ստանալով՝ գալիս է Բաքու և իրեն հատուկ նվիրվածությամբ գործի անցնում: Ինքնապաշտպանության շտաբը գտնվում էր Իսահակ Մելիքյանի լուսանկարչատանը: Իրադրությունը պարզելով՝ սթափեցնում է ժողովրդին: Դումանի մարտախումբը առաջին օրը բաղկացած էր 6 զինված մարտիկից: Դաշնակցությունը քիչ քանակությամբ զենք ուներ, այն էլ Բաքվից հեռու՝ Շամախինսկայում: Հերոսական ջանքերով հաջողվում է տեղափոխել զենքը (10–12 հրացան, նույնքան տասնոցներ, փամփուշտներ): Զենք ձեռք բերելու խնդրում Դումանին օգնել են Բաքվի ռուսական զորամասի հայ զինվորները:

Փետրվարի 7-ին Դումանը վեց հոգով կարողանում է կանգնեցնել և հաղթել կատաղած, արյան ու թալանի ծարավ թուրք ամբոխը, մաքրել հայկական եկեղեցու շրջապատը գազազած ամբոխից: Պահպանվել են մի շարք վկայություններ այդ օրվա մասին՝ Դումանի հերոսության ու ռազմական տաղանդի, իր վարքագծով օրինակ լինելու մասին: Նրան օգնության են գալիս հին, փորձված ֆիդայիներ, նաև երիտասարդներ, համալրում ինքնապաշտպանության ջոկատը: Բացի հայկական թաղամասերը թուրքերից մաքրելուց, ջոկատը թուրքական և խառը բնակչությամբ թաղամասերից ազատում, փրկում է բազմաթիվ հայերի: Նա

ոչ միայն կասեցնում է փետրվարի 7-ի թուրքերի հարձակումը, այլև հարկադրում է թուրքերին սպիտակ դրոշ պարզել: Հայերն ընդունում են հաշտության առաջարկությունը, տեղի են ունենում հոգևորականների փոխադարձ այցելություններ, մեղադրելով □շեյթանին□: Սակայն վտանգը չի վերանում, ինքնապաշտպանության ջոկատները շարունակում են զինվել: Զենքը ձեռք էր բերվում դժվարությամբ. դրամական միջոցներ չկային:

1905 թ. փետրվարի 20-ին Երևանում թուրքերը հարձակվում են շուկայի վրա, մեծ թվով հայեր սպանում ու վառում շուկան: Երևանի նահանգում թուրքերի հարձակումներն սկսվում են Նախիջևանից: Բաքվի նման թուրքերը գործում էին ցարական իշխանությունների հովանավորությամբ ու օգնությամբ, գավառապետն էր թուրք գեներալ Ալիխանով-Ավարսկին: Նախիջևանի-Շարուրի հայությունը, թուրքերի համեմատ, սակավաթիվ էր, վատ զինված, կուտակվում է Շխմահմուտ գյուղում: Թուրք զինված ամբոխը, շրջակա մահմեդական բնակչության հետ միավորված, հարձակվում է հայ անզեն բնակչության վրա. զոհվածների թիվն անհաշիվ էր, ամենուր թալան, ավերում, հրդեհում: Թուրքերը նախօրոք մշակված ծրագրով ցանկանում էին Նախիջևանը իսպառ պարպել հայերից՝ գավառի անկախությունը հայտարարելու նպատակով, իսկ Կովկասը նվաճելու համար, միացրեցին սյունիներին ու շիաներին: Կովկասը հայաթափելը պանիսլամիզմի հիմնական նպատակն էր:

Բավական լայն տարածություն ընդգրկող Երևանի նահանգի, ինչպես նաև Զանգեզուրի ու Գանձակի նահանգի հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ղեկավարելու համար մայիսյան ընդհարումներից հետո Երևան է գալիս Նիկոլ Դումանը: Դա տեղի Դաշնակցության բյուրոյի որոշումն էր, որը համընկնում էր նաև կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշման հետ: Գալով այստեղ՝ նա ստանձնում է Երևանի զինվորական հրամանատարի, նահանգի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի դերը: Այլ ընտրություն չկար: Դումանն աչքի էր ընկել հատկապես Բաքվի կռիվների ժամանակ, թեև նա մինչ այդ էլ ակնառու գործչի համբավ ու հեղինակություն ուներ: Երևանի նահանգը իր վարչական ընդգրկմամբ Բաքվի համեմատ մեծ էր:

Երևանի հայոց և թուրքաց գարնանային առաջին ընդհարումը տեղի է ունենում 1905 թ. մայիսի 12-ից 15-ը. կողոպուտ, ջարդ, հրդեհ, մեծ թվով զոհեր՝ հայերից: Հետագա անելիքները համակարգելու համար կազմվում է □Երևանի նահանգի զինվորական մարմին□ Դումանի ղեկավարությամբ, սահմանվում է խստագույն կարգապահություն՝ առիթ չտալ և նախահարձակ չլինել: Մայիսի 21-ին ընդհարումները դադարում են: Բայց ավելի ուժգնությամբ վերսկսվում են մայիսի 22–24-ին:

Երևանի թաղերում տեղակայված խմբերը Դումանի գլխավորությամբ արժանի հակահարված են տալիս թուրքերին: Ընդհարումները շարունակվել են երկու տարի:

… Դումանի խորհրդով Ղարաբաղի շրջանի ընդհանուր հրամանատար է կարգվում Խանասորա Վարդանը, նաև Համազասպը, Նախիջևանի մարտախմբի հրամանատար է նշանակվում Դաշնակ Խեչոն, գործադրվում է փոխվրեժի սկզբունքը: Դումանը լրացուցիչ մարտական ուժեր է ուղարկում Նախիջևան՝ Վանա Սարգսի (Բարսեղյանի) գլխավորությամբ, որոնք տեղ են հասնում հունիսի սկզբներին: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը օգնում է զինելու 150 հոգիանոց մարտախումբը, որի զգալի մասը նախկին զինվորներ էին: Մարտախումբը հունիսի 12-ի գիշերը հարձակվում է Ջահուկի վրա, որի հայ բնակիչներին մինչ այդ կոտորել էին թուրքերը:

Դումանը մշակում է ինքնապաշտպանության ծրագիր. 1) ստեղծել ինքնապաշտպանական բանակ, 2) հստակեցնել բանակի կառուցվածքը, 3) մշակել և կենսագործել մարտավարություն: Բանակի շարքեր պետք է մտնեին միայն կամավորներ, ազգի նվիրյալներ: Յուրաքանչյուր շրջան, բնակավայր ինքը պիտի ստեղծեր և ղեկավարվեր դրսից հրավիրված փորձառու մարտիկներով՝ դրսից եկածների հեղինակությունը որպես օրենք մեծ է լինում:

Ազգային միլիցիա, ազգային տուրք՝ զինվորական, Դումանի հրամանատարությամբ կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները, բերին այն եզրակացության, որ հայության փրկության և գոյատևման միակ հուսալի և կենսունակ միջոցը զինված, ուժեղ ինքնապաշտպանությունն է: Դումանի մշակած ծրագրի 33 կետերի մեջ կարևորը 20-րդն էր՝ մեկ սպանված հայի դիմաց կրկնակի թուրք, նաև՝ հարձակում: Եթե Դումանն ու ընկերներն ունեին ինքնապաշտպանության փորձ՝ «շկոլա», ապա նորերն այդ փորձը չունեին:

Դումանի կարգադրության շնորհիվ Բաքվի, Երևանի, Թիֆլիսի հայ բնակչությունն ունեցավ սեփական ինքնապաշտպանության զինված ուժեր, որոնք պիտի գործադրվեին շատ զգուշությամբ: Գործում էր նաև սեփական ազգային դատարանը («պետության մեջ պետություն»), որն անողոք էր նաև հայերի հանդեպ: Գնդակահարության, տեռորի վճիռները ստորագրում էր անձամբ Դումանը:

1905-ի վերջերից 1906-ի սկզբներից ցարական իշխանությունները սկսում են հայերին զինաթափ անել: Շուշիում գեներալ Գոլոշչապովը, Շատախում գնդապետ Լևիցկին ղեկավարում էին պատժիչ ջոկատները, որոնք ապահովում էին թուրքերի սար բարձրանալը՝ քոչը:

1906 թ. փետրվարի 20-ին ընդհարումները դեռ շարունակվում էին, երբ Թիֆլիսում փոխարքայի պալատում, բացվում է խորհրդակցություն, պարզելու համար զինված ընդհարումների պատճառը և այն վե-

բացնելու միջոցները: Հայկական և թուրքական կողմերից մասնակցում էին 30-ական պատգամավոր: Վորոնցով-Դաշկովն իր ելույթը եզրափակում է այն մտքով, որ ընդհարումների պատճառը Հայ հեղափոխական դաշնակցությունն է: Հայերի ներկայացուցիչներն իրենց ելույթներում նշում էին իշխանությունների հանցավոր անտարբերությունը: Թուրքերը պահանջում էին Կովկասի սահմաններից հեռացնել Դաշնակցությանը, ֆիդայական խմբերին: Փոխարքան խստիվ կարգադրում է ձեռք առնել ամենակտրուկ միջոցները՝ խաղաղություն և կյանքի ապահովություն հաստատելու համար:

Ծայրահեղ լարված աշխատանքը քայքայել էր Դումանի առողջությունը: Նա որոշում է ժամանակավորապես թողնել հրամանատարությունն ու բուժվել: Շրջաբերականով Դումանը դիմում է հայությանը, մասնավորապես, ինքնապաշտպանության մասնակիցներին, տալիս նրանց հրահանգներ, որոնցով ղեկավարվելը կնպաստեր հայ ժողովրդի ֆիզիկական ապահովությանը: 1905 թ. դեկտեմբերին և 1906 թ. հունվարին նա մասնակցում է Դաշնակցության Երևանի ԿԿ շրջանային ժողովին, հանդես գալիս Երևանի ու Զանգեզուրի ինքնապաշտպանության վիճակը ամրապնդելու առաջարկություններով:

Ցարական իշխանությունների հետապնդումից խուսափելով՝ Դումանը մի որոշ ժամանակ անցկացնում է Ռուսաստանում, որտեղ 1907 թ. հրատարակվում է Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանության» գրքույկը: 1909 թ. նա գնում է Կարին, ուր հաստատվել էին երիտթքուրքերի հանրապետական կարգեր, ապրում Վրացյանի, Ռոստոմի ընկերությամբ, Եփրատի վրա կատարած որսորդությամբ՝ զարմացնում ընկերներին: 1910 թ. Դումանը մեկնում է Կոպենհագեն, որտեղ մասնակցում է սոցիալիստների 2-րդ համագումարին:

Համագումարում պատգամավորների պահանջով, Վարանդյանից բացի, հանդես է գալիս նաև Դումանը: Նրա ելույթը ռուսերեն լեզվով էր և նվիրված էր զինված ապստամբության ու ինքնապաշտպանության խնդիրներին, հայ-թուրքական ընդհարումներին, Դաշնակցության զինված ուժերի քանակին, մարտավարության ձևերին: Նա ներկայացնում է ինքնապաշտպանության կազմակերպման ծրագիրը:

Համագումարի ավարտից հետո՝ Դումանը վերադառնում է Կ. Պոլիս, վերահրատարակում «Նախագիծը»:

Կարճ ժամանակ անց՝ Նիկոլ Դումանը գնում է Պարսկաստան՝ Թեհրան: Այստեղ հայ դաշնակցական և պարսիկ հեղափոխականների միջև կայացած բանակցությունների արդյունքում Դաշնակցության անունից Ռոստոմը խոստանում է զինջոկատ ուղարկել Ատրպատական՝ օգնելու միապետության դեմ ապստամբած պարսիկ սահմանադրականներին: Դումանը համաձայն չէր կուսակցական ժողովի որոշ-

մանը՝ գտնում էր, որ պարսիկ ժողովուրդը պատրաստ և հասունացած չէ հեղափոխության համար, լավատես չէր հաղթանակի նկատմամբ, քանզի կարծում էր, որ ցարական Ռուսաստանը ցանկացած պահի կարող էր զորք մտցնել Պարսկաստան՝ շահին օգնելու նպատակով:

Պարսկաստանում 1905 թվականից սկսած շահի միապետական ռեժիմի դեմ ժողովրդի ըմբոստացումը շարունակվում էր փոփոխական հաջողություններով: Այն հատկապես սրվում է ռուսական զորքի Թավրիզ մտնելուց հետո: Պարսից ժողովրդի հակամիապետական ապստամբության կազմակերպիչներից և գործուն մասնակիցներից Եփրեմ խանի (1868–1912) ղեկավարած ապստամբած բանակը 1911 թ. հաղթանակ է տանում: Հայերը խուսափում են զոհերից, ռուսական բանակը հաշվի է առնում հայերի չեզոքությունը: Նույն՝ 1911 թ., ելնելով ծանր վիճակից՝ պարսիկ և հայ հեղափոխական մարմինների ու Թավրիզի ապստամբած զինված ուժերի խնդրանքով հրամանատար է նշանակվում Նիկոլ Դումանը: Նա Թավրիզ է գալիս իր 100 հոգանոց մարտախմբով և նշանակվում սահմանադրական ուժերի ընդհանուր հրամանատար: Թավրիզ հասնելով՝ Դումանը կարճ ժամանակում կարողանում է կազմակերպել քաղաքի պաշտպանությունը, թեև ուժերն անհամեմատ պակաս էին: Շուտով իրականանում է Դումանի կանխատեսումը. հեղափոխական ուժերը երկար չեն դիմանում, պարտվում են: Ռուսական զորքը երկրորդ անգամ է մտնում Պարսկաստան և շարժվում Թավրիզի ու Թեհրանի վրա: Հայ մարտիկները, նախապես ստանալով Եփրեմի թույլտվությունը, 1911 թ. սեպտեմբերին Թեհրանով ու Սալմաստով անցնում են Վան: «Ինչպես տարա, այնպես էլ հետ բերի տղաներին ողջ և առողջ»[6],– ասում է Դումանը:

Որոշ ժամանակ մնալով Վանում՝ Դումանը Արամի և Իշխանի հետ, մարտական ուժեր է կազմակերպում, սակայն Վանի նահանգապետի կարգադրությամբ հեռանում է այնտեղից: Գնում է Կ.Պոլիս, ապա՝ Թիֆլիս, առողջական վիճակից դրդված ներկայանում է ոստիկանատուն: Նրան ձերբակալում են, գցում Մետեխի բանտը: Ընկերների օգնությամբ, սակայն, նրան ազատում են, ուղարկում բուժվելու Աբաստման, Սուխումի, Կիսլովոդսկ:

1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, բուռն թափով ծավալվում է կամավորական շարժումը: Դումանը չի խրախուսում կամավորական շարժումը, որը, ըստ նրա, կարող էր թուրքերին առիթ տալ նոր կոտորածների: Այդուհանդերձ, նա կամավորական խմբերի հրամանատարի ամենահավանական թեկնածուն էր: Սակայն նրա առողջական վիճակը վատթարանում է և նրան պառկեցնում են հիվանդանոց՝ Բաքվում:

---

[6] *Հ. Գևորգյան. Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 358:*

Զգալով պատերազմին մասնակցելու իր անկարողությունը՝ 1914 թ. հուլիսի 27-ին Նիկոլ Դումանը ինքնասպանությամբ վերջ է տալիս կյանքին: Նրա աճյունը Բաքվից տեղափոխում են Թիֆլիս, թաղում Խոջիվանքի գերեզմանատանը: Գերեզմանն այժմ գոյություն չունի:

НИКОГАЙОС ТЕР-ОГАННИСЯН (НИКОЛ ДУМАН)
(К 100-летию со дня смерти)

АЛВАРД ГАЗИЯН

Резюме

Н. Тер-Оганнисян, один из идеологов национально-освободительного движения, член партии Дашнакцутюн со дня основания, родился в 1867 г. в семье священника. В 1887 г. окончил епархиальную школу в г. Шуши. Несколько лет учительствовал в Карабахе, на Северном Кавказе. Увлекшись национально-освободительными идеями, Никол в 1891 г. перебрался в густонаселенную армянами область северной Персии – Атрпатакан, граничащую с Васпураканом в Турции. Здесь он установил связь с отрядами повстанцев (фидаи) из ближайших армянских деревень и Дериковского монастыря. Будучи отличным охотником, он хорошо знал местные географические особенности. Наряду с преподаванием в армянских школах Никол, исходя из своих убеждений, участвует в борьбе против турецкого насилия, доставляя вместе с отрядами фидаи оружие восставшим братьям, западным армянам. Анализируя и оценивая действия отдельных, небольших боевых отрядов фидаи, Н. Тер-Оганнисян приходит к выводу о необходимости изменения тактики борьбы и вводит в практику принцип взаимной мести: око за око, зуб за зуб. По заданию местной партийной организации Никол организует боевой отряд для доставки вооружения в помощь ванским армянам. В октябре 1895 г. отряд выходит из села Автван, но по пути попадает в засаду. После двух дней сопротивления Николу удается, благодаря своей находчивости, вывести отряд из охваченного пламенем хлева. С тех пор он носит прозвище «Думан» (мгла, темный ветер, черная туча). В 1904 г. Никол Думан переехал в Баку и устроился на работу, принимая участие в общественной и партийной жизни. В период армяно-татарских вооруженных столкновений 1905–1906 гг. он организовал самооборону армян, разработал специальные инструкции о военном налоге, о суде, о создании на местах отрядов с целью самозащиты в Баку, в Гянджинской и Эриванской губерниях, в Нахичевани. В 1910 г. Думан принимает участие во 2-м конгрессе социалистов в Копенгагене, прочитав доклад на русском языке, хотя сам он не разделяет идеологии социалистов. В 1911 г. в Персии он командует восставшими против шаха Конституционными силами, которые, не справившись с преобладающими силами шаха, терпят поражение. Думану со своим отрядом удается избежать потерь и вернуться обратно. К началу Первой миро-

вой войны здоровье Думана было подорвано, в Баку его укладывают в больницу. Сознавая свою неспособность участвовать в войне, 27 июля 1914 г. Никол Думан застрелился. Он похоронен в Тифлисе.

NIKOGHAYOS TER-HOVHANNISYAN (NIKOL DUMAN)
(To the 100th death anniversary)

ALVARD GHAZIYAN

S u m m a r y

N. Ter-Hovhannisyan was one of the ideologists of national-liberation movement, the member of the party of Dashnaktsutyun from the first days of its establishment. He was born to the family of a priest. In 1887 finished Diocesan School in Shusha. He was greatly inspired by national-liberation movement and joined fedayees. He was extremely brave and was an experienced hunter. Along with teaching in Armenian schools Nikol took part in the struggle helping fedayees against the Turkish oppressors.

Analyzing and evaluating operations of small fedayee groups N. Ter-Hovhannisyan realized that the tactics and policy of the struggle should be changed and introduced a new principle of struggle – eye for eye or «lex talionis». The local party ordered Nikol to form a fighting unit in the village of Avtvan, but unfortunately they were ambushed on their way. After a two-day battle he managed to break out due to his wit. Since then he was called “Duman” (meaning mist, dark wind, black cloud). In 1904 Nikol Duman moved to Baku where he continued his active social life organizing self-defense of Armenians in 1905–1906. He worked up special instructions on military tax, court, on establishment of local detachments for self-defense in Baku, Gyanja and Erivan provinces, in Nakhijevan.

In 1910 Duman took part in the Second Congress of Socialists in Copenhagen, presenting a report in Russian, although he didn’ share much of their ideology. In 1911 he was commanding the rebels against the Persian shah, yet they were defeated, Duman managed to bring back the detachment safe and sound. By the beginning of the World War I his health was spoilt. Realizing his weakness in volunteering movement, he shot himself on July 27, 1914. He is buried in Tiflis.